

Ռուբեն Սաֆրաստյան, Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., «Տիր» հրատ., 2019, 140 էջ*



Թեև անցած 100 տարիների ընթացքում խորհրդային, հետխորհրդային ու սփյուռքահայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է հանրապետական Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Քեմալի կյանքի ու գործունեության առանձին դրվագներին, այդ թվում նաև՝ 1919-1921 թթ. Հայաստանի դեմ նրա անհաշտ պայքարի պատմությանը, բայց մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով մեզանում այդ ականավոր քաղաքական ու ռազմական գործչի մասին այդպես էլ չի ձևավորվել որոշակի **գիտական հայացք**:

Պատճառն այն է, որ խորհրդային շրջանում մենք բախվել ենք Լենին-Աթաթուրք բարեկամության ավանդույթներով սնվող քա-

ղաքական արգելքներին, իսկ հետխորհրդային տարիներին՝ աղբյուրների ոչ բավարար ուսումնասիրվածության իրողությանն ու պատմաքաղաքական գործընթացների ընկալման որոշակի հայեցակարգի բացակայության փաստին: Գրեթե նույն մակերեսայնությունն ու միակողմանիությունն են նկատվել նաև Սփյուռքի հայ ուսումնասիրողների շրջանում, որոնք հիմնվել են հիմնականում արևմտյան աղբյուրներում Մուսթաֆա Քեմալի մասին առկա սահմանափակ տեղեկատվության վրա:

Բայց քանի որ հայաստանյան թուրքագետների համար վերջին տասնամյակներում հասանելի են դարձել Թուրքիայում հրապարակված սկզբնաղբյուրները և առաջին հերթին Մուսթաֆա Քեմալի գաղտնի ելույթների ու «հոյժ գաղտնի» մակագրությունը կրող բազմաթիվ հրահանգների բովանդակությունը, այսօր հնարավոր

* Ընդունվել է տպագրության 12.11.2019:

րություն ունենք ամբողջական պատկերացում կազմելու ժամանակակից Թուրքիայի հիմքերը դրած այդ գործչի մասին: Իսկ դա մեզ անհրաժեշտ է ոչ միայն գիտաճանաչողական, այլև գործնական-քաղաքական տեսանկյունից: Սեփական ժողովրդի ղեկավարական պատմությունից շատ թե քիչ տեղյակ լինելով թուրքական դիվանագիտության գործունեության բարդ նրբերանգներին՝ դրանց շուրջ ստեղծել ենք առասպելախառն պատումների վրա հիմնվող բավականին ճշող մտակաղապարներ: Եվ երբ այդ ամենը համեմատում ենք սեփական սահմանափակ փորձի ու հմտությունների հետ, մեզանում մի յուրահատուկ անզորության բարդույթ է ձևավորվում:

Անշուշտ, Թուրքիան՝ որպես անընդհատ պետական կյանքով ապրած երկիր, դարերի ընթացքում կուտակել է դաժան ու սառը «ռեալպոլիտիկ» գործիքակազմերի և կառուցակարգերի ահռելի պաշար, ինչով անհամեմատելի է մեր սահմանափակ փորձի հետ: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, որ Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագրությունը պետք է շարունակի առաջնորդվել խորհրդային շրջանում մեզ պարտադրված գնահատականներով կամ էլ թուրքական դիվանագիտության նենգությունը բարոյական սկզբունքներով դատապարտողի հայտնի մտակաղապարով: Սեփական անկախ պետականությունը կառուցելու գործընթացում առաջնային է դառնում Թուրքիայի պետաքաղաքական հարուստ ավանդույթների գիտական ուսումնասիրությունը՝ մի կողմ դնելով դրանց հասնելու անհնարինության քողարկված համոզմունքից բխող **հաշտվողականության** և **բարոյական դատապարտման** աշխարհայացքային մեկնակետերը:

Մենք պետք է **իմանանք, ճանաչենք ու հասկանանք** վերջին երկու դարերի ընթացքում մեր հակառակորդի արձանագրած հաջողությունների մեծ ու փոքր գաղտնիքները, որպեսզի վաղը կարողանանք գտնել դրանց հակազդելու գործիքները: Իսկ այդ ամենի հիմքում ընկած է նախ և առաջ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք քաղաքական, ռազմական ու պետական գործչի կյանքի և գործունեության համակողմանի ուսումնասիրության գիտական առաջադրանքը:

Այս առումով պրոֆ. Ռուբեն Սաֆրաստյանի «Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ.» ոչ մեծ ծավալ ունեցող, բայց բավականին տարողունակ հարցեր ու հարցադրումներ պարառող գրքույկը մեր պատմագետների փաստորեն առաջին փորձն է: Որովհետև սա ամենևին էլ պարզունակ կաղապարների միջոցով խորքային հարցերի քննարկումից խուսափող «ակադեմիական»¹ նարատիվ չէ, այլ քննական-վերլուծական հայացք՝ այդ բառի արդիական իմաստով: Իսկ նրա նրբորեն քողարկված ճանաչողական

¹ Քանի որ վերջին շրջանում մեզանում ակադեմիզմը հաճախ նույնացվում է փաստագրության հետ, ստիպված ենք չակերտների մեջ վերցնել այդ հասկացությունը:

մեկնակետը Մուսթաֆա Քեմալի հաջողության գաղտնիքի որոնման համառ ձգտումն է: Դա ստիպել է Ռուբեն Սաֆրաստյանին նախ և առաջ ժառանգորդական կապ փնտրել Հայոց ցեղասպանության իրականացման մեջ պատասխանատու երիտթուրքերի և նրանց հանցագործությունը պարտակելու համար Մուդրոսի զինադադարից հետո քաղաքական ասպարեզ իջած նոր Թուրքիայի առաջնորդի միջև: Սրանով բացահայտվել է Թուրքիայի պետական քաղաքականության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ նախորդ վարչակարգերի հանցագործություններից սահմանազատվելու, բայց միաժամանակ դրանք նոր պայմաններում նոր մեթոդներով շարունակելու գործելակերպը:

Մուսթաֆա Քեմալի գործունեությունն այդ առումով հիրավի՝ դասական օրինակն է: Ուստի 1920 թվականի ընդամենը մի քանի ամսվա ընթացքում նրա «տարօրինակ» անցումը Մեծ եղեռնը դատապարտող «fazabat» բառից երիտթուրքերի ցեղասպանական բառապաշարին՝ միանգամայն օրինաչափ էր ու հասկանալի: Հայաստանի Հանրապետության վրա 1920 թվականի աշնանային հարձակման նախօրեին արձանագրված նման «մետամորֆոզը» սովորական թուրքական երկերեսանիության արտահայտություն չէր, ինչպես կարծում է հեղինակը, այլ Թուրքիայի պետական քաղաքականությանը բնորոշ պերմանենտ ծավալապաշտության գործիքակազմերի հերթափոխ: Թուրքիայի անցյալի ու ներկայի պետական այրերի քաղաքական հայտարարությունների մեջ անիմաստ է փնտրել քաղաքական սկզբունքներ՝ դրանց արևմտյան ըմբռնմամբ. վերջիններս ծառայել ու ծառայում են սոսկ որպես պերմանենտ ծավալապաշտության գործիքներ: Սկզբունքը սեփական տարածքների ընդարձակման էքստենսիվ ռազմավարությունն է, որի իրականացման նոր մարտավարության հայրը հենց ինքը Մուսթաֆա Քեմալն էր՝ թուրքական Ազգային ուխտի հեղինակը:

Իր աշխատության մեջ կարևոր տեղ հատկացնելով այդ ուշագրավ փաստաթղթի ուսումնասիրությանը՝ Ռուբեն Սաֆրաստյանը փաստորեն վեր է հանել մեր օրերում սկիզբ առած թուրքական Ազգային ուխտի վերակենդանացման գործընթացի պատճառները: Դա թույլ է տալիս հասկանալ, որ ժամանակին խորհրդային հետազոտողների կողմից թուրքական Ազգային ուխտի դիտարկումն իբրև Օսմանյան կայսրության ընդարձակ սահմաններից **ազգային պետության** անձուկ շրջանակներին անցնելու փորձ չի դիմանում որևէ գիտական քննադատության: Վերջին իրադարձությունները գալիս են հաստատելու, որ Մուսթաֆա Քեմալի որդեգրած ազգ-պետության մոդելն իրականում թուրքական ծավալապաշտության ավանդական ձևերի ու մեթոդների արդիականացման փորձ էր, որի առաջին հանգրվանում ձևավորվում էր նրա **միջուկը**՝ Անատոլիայի ու Արևմտյան Հայաստանի մեկտեղումով, բայց «ականապատվում էին» այդ միջուկի շուրջն ուրվագծ-

վող ընդարձակման հաջորդ գոտիները դեպի Սիրիա, Կիպրոս, Թրակիա, Իրանի Ատրպատական, Արևելյան Հայաստան և Արևմտյան ու Հարավային Վրաստան: Այս նախապես «ականապատվող» տարածքների հաջորդական «պայթեցման» մեկդարյա փորձը գալիս է վկայելու, որ, ապահովելով թուրքական նոր ծավալապաշտության միջուկի ձևավորումը, Մուսթաֆա Քեմալն իր հաջորդներին է կտակել էթնիկ ու կրոնական գործոնների օգտագործմամբ շրջակա երկրների զավթման մի ամբողջական ծրագիր, որն արդեն գործի է դրվել 1939 թ. Ալեքսանդրետի սանջակում, 1974 թ. Կիպրոսում, այսօր՝ Հյուսիսային Սիրիայում, իսկ վաղը՝ թվարկված մյուս երկրներում ու տարածաշրջաններում: Ուստի Սիրիայի տարածքում ներկայումս իրականացվող էթնիկ գտումների քաղաքականությունն ուղեկցվում է Վրաստանում և Բալկաններում ժողովրդագրական պատկերի փոփոխության ավելի մեղմ եղանակների կիրառմամբ, որը համապատասխան պայմանների հասունացումից հետո հասնելու է իր կրիտիկական հանգրվանին, այսինքն՝ էթնիկ գտումների քաղաքականությանը:

Բայց մեզ համար ավելի ուսանելի են ոչ թե Մուսթաֆա Քեմալի մշակած Թուրքիային մերձակա թյուրքական ու մահմեդական էթնիկ անկլավների «պայթեցման» մանրամասները, այլ սեփական զոհին մեկուսացնելու և ապա վճռական հարված հասցնելու գիշատիչ քաղաքականության բարդ նրբերանգները, որոնք գործի են դրվել 1920 թվականին Հայաստանի Հանրապետության դեմ: Պատճառն ակնհայտ է. եթե մեր հարևան Վրաստանում թուրքական ծավալապաշտությունն այսօր գործում է խաղաղ ներդրման մեթոդով, ապա Թուրքիայի ու Հայաստանի ներկա սահմանների երկու կողմերում վաղուց արդեն վերացել են հայ-թուրքական շերտընդմեջ բնակության գոտիները:

Ուրեմն Հայաստանի Հանրապետության դեմ Մուսթաֆա Քեմալի 1919-1921 թթ. պայքարում կիրառված ագրեսիվ զինանոցի ուսումնասիրությունը ավելի քան արդիական է մեր օրերում: Ի՞նչպես կարողացավ նա օգտագործել Խորհրդային Ռուսաստանի ու Անտանտի հակասությունները՝ Հայաստանի Հանրապետության հետ մեն-մենակ մնալու համար, և ամենակարևորը՝ ո՞րն էր թուրք-հայկական պատերազմի իրական նպատակը հարցադրումներն այսօր էլ մեզ համար կյանքի ու մահվան հարցեր են: Եվ այստեղ է, որ Ռուբեն Սաֆրաստյանն անցնում է իր ուսումնասիրության գլխավոր նորոյթի՝ Հայաստանը «մեջտեղից վերացնելու» համար Քյազիմ Կարաբեքիրին ուղղված արտգործնախարար Մուհթար բեյի 1920 թ. նոյեմբերի 8-ի գաղտնի հրահանգի ներկայացմանը: Թվում էր, թե 1920 թվականի նոյեմբերին արդեն պարտված և հարկադրաբար Խորհրդային Ռուսաստանի հովանու տակ մտնող Հայաստանը «մեջտեղից վերացնելու» խնդիրն առաջադրելու համար որևէ անմիջական ու շոշափելի նախադրյալ չկար: Ի վերջո, Թուր-

քիան տվյալ պատմաշրջանում ճակատային գրոհով չէր կարող հաղթահարել Ախորյան-Արաքս գիծը՝ չբախվելով Խորհրդային Ռուսաստանի հավակնություններին: Հետևաբար ո՞րն էր Մուսթաֆա Քեմալի կողմից իր արտգործնախարարի միջոցով տրված հրահանգի իրական շարժառիթը: Ակնհայտ է, որ նրա նպատակը Հայաստանը ներսից «այայթեցնելու» համար թյուրքական էթնիկ անկլավների ընդլայնումն ու զինումն էր, քանի որ մինչ այդ Կարսի մարզում և Նախիջևանում դա հաջողվել էր իրականություն դարձնել, իսկ Զանգիբասարում և Վեդիում ոչ: Ուստի Մուսթաֆա Քեմալը հրահանգում էր Քյազիմ Կարաբեքիրին. «Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն»²:

Դա է պատճառը, որ մեր երկրի հանդեպ Խորհրդային շրջանում ևս Թուրքիան շարունակեց իրականացնել ճիշտ նույն քաղաքականությունը՝ ընդհուպ մինչև Ղարաբաղյան շարժումը և Հայաստանի անկախացումը: Ուստի այդ շրջանում Հայաստանից ադրբեջանցիների հեռանալու փաստից Բաքվում այնքան զայրացած չէին, որքան Անկարայում: Բայց այսօր էլ «քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու» քաղաքականությունը շարունակվում է: Միաժամանակ Թուրքիայի հուշարարությամբ Ադրբեջանի կողմից ասպարեզ են նետվում Զանգեզուրի, «Գյոքչայի» և անգամ «Իրևանի» հանդեպ հրապարակային հավակնությունները: Դրանք Հայաստանի այն տարածքներն են, որոնք ժամանակին ունեցել են զգալի ադրբեջանական բնակչություն:

Ստացվում է, որ Մուսթաֆա Քեմալից մինչև Ռեջեփ Թայիփ Էրդողան Թուրքիան առաջնորդվում է Հայաստանը «մեջտեղից վերացնելու» նույն ծրագրով: Տարբերությունը միայն այն է, որ «Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն» դարձնելու ցանկությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերածվել է կատարված փաստի՝ աքցանի մեջ վերցնելով մեր երկիրը: Ուրեմն միջազգային հանրությունն այսօր հստակորեն պետք է գիտակցի, որ տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվ դերակատարությունն ուղղակի բացառում է առանձին վերցրած Ադրբեջանի հետ Հայաստանի բանական փոխզիջման հնարավորությունը:

Հանգելով իր ուսումնասիրության գլխավոր արդյունքին՝ Հայաստանի ու հայության գոյության համար մշտական սպառնալիք հանդիսացող սուլթանական, երիտթուրքական, քեմալական և էրդողանյան քաղաքականության ժառանգորդականության բացահայտմանը, Ռուբեն Սաֆրաստյանը կարծես թե կիսատ է թող-

² Ռուբեն Սաֆրաստյան, Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., «Տիր» հրատ., 2019:

նում իր գրքույկը. չկա վերջաբան, եզրակացությունները նույնպես բացակայում են: Թերևս հեղինակը քաղաքավարի կերպով մի կողմ է քաշվում անցալի ու ներկայի ակնհայտ զուգահեռների շուրջ խորհրդածելու հնարավորություն տալով մեզ՝ իր ընթերցողներին: Ուստի պատմությունը անցյալից տեղափոխելով ներկա՝ մեր համեստ գրախոսության շրջանակներում փորձեցինք հասկանալ առաջիկայում մեզ սպասող մարտահրավերների բնույթն ու ուղղվածությունը, բայց ամենևին էլ չփակեցինք թեման, որովհետև այն պատկանում է ոչ միայն ներկային, այլև ապագային:

Դրանով հանդերձ, մեր կարծիքով, Ռուբեն Սաֆրաստյանի «Մուսթաֆա Քեմալ պայքար Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ.» արժեքավոր գրքույկը մեծապես կշահեր, եթե նրա հեղինակն ավելի հանգամանալից ներկայացներ 1921 թվականի ընթացքում թուրքական Ազգային ուխտի իրականացման համար գործադրված հաջորդ ջանքերը: Դրանք գտնվում էին ֆիզիկապես արդեն գոյություն չունեցող, բայց Թուրքիայի կառավարիչներին դեռևս անհանգստացնող Հայաստանի Հանրապետության դեմ հեռակա պայքարի ծիրում: Մասնավորապես, մեզ համար հետաքրքիր կլիներ հեղինակի դիրքորոշումը Բաթում-Սուրմալու փոխանակության հարցի հանդեպ, ինչը թուրքական Ազգային ուխտի խախտում էր՝ հանուն համաթուրանական երազանքի: Դա մեկ անգամ ևս գալիս էր փաստելու, որ, մեղմ ասած, միամտություն է թուրքական Ազգային ուխտի դիտարկումն իբրև Օսմանյան կայսրության ընդարձակ սահմաններից ազգային պետության անձուկ շրջանակներին անցնելու փորձ: Մուսթաֆա Քեմալի կողմից իբր թե որդեգրված ազգ-պետության մոդելն անմիջապես հոդս էր ցնդում ծովափնյա հարուստ Բաթումի և աղքատ ու մեկուսացած Սուրմալու-Արարատի միջև ընտրություն կատարելու ընթացքում, որովհետև վերջինիս փեշերից այն կողմ բացվում էր Թուրանի ճանապարհը...

Գևորգ Ս. Խուդինյան
Պատմագիտության դոկտոր

Գևորգ Ս. Խուդինյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց Նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարախոսության վերաբերյալ: Զբաղվում է նաև Հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլեկտրոնային հասցե՝ khoudinyan@yahoo.com

Summary

Ruben Safrastyan, Mustafa Kemal; The Fight Against the Republic of Armenia in 1919-1921, Institute of Oriental Studies of the NAS RA, Yerevan, “Tir” Publishing House, 2019, 140 pages

Gevorg S. Khoudinyan

Although, over the past 100 years, the Soviet, post-Soviet, and Diaspora Armenian historiography has repeatedly touched upon separate episodes of the life and activities of Mustafa Kemal – the founder of the republican Turkey, including the history of the irreconcilable struggle against Armenia in 1919-1921, for a number of objective and subjective reasons no scientific view on that prominent political and military figure has been formed within us. The reason is that in the Soviet era we faced political barriers fed by the traditions of the Lenin-Ataturk friendship, and in the post-Soviet years the reality of insufficient study of sources and the lack of a certain concept of perception of historical-political processes in us. Almost the same superficiality and one-sidedness has been observed among Diaspora Armenian scholars, who have relied mainly on limited information about Mustafa Kemal in western sources.

Since the restoration of independence of Armenia, our historiography in assessing the life and activities of Mustafa Kemal should not continue to be guided by reconciliatory characterizations of the Soviet era, or merely a damnatory’s propagandistic mental pattern based on moral principles. In the process of building our own independent statehood, the scientific study of Turkey’s rich state-political traditions becomes paramount, leaving aside the starting points of worldviews on reconciliation and moral condemnation stemming from their concealed belief of the impossibility of achieving and surpassing them. Today we need to know, recognize, and understand the great and small secrets of our adversary’s successes over the last two centuries, so that tomorrow we can find the tools to counter them. On the basement of all this first of all lies the scientific task of comprehensive study of the life and activities of politician and statesman Kemal Ataturk.

In this regard prof. Ruben Safrastyan’s brochure entitled “Mustafa Kemal. The Fight Against the Republic of Armenia in 1919-1921” though not of a large volume, however is quite full of extensive questions and statements of issues and is in fact the first bold attempt. The author has succeeded in finding a clear inheritance link between the Young Turks responsible for the Armenian Genocide and the new Turkish leader who appeared in the political stage concealing their crime after the

Armistice of Mudros. This has revealed one of the most essential principles of Turkey's state policy to distinguish itself from the crimes committed by previous administrations and those already uncovered, but at the same time continuing to act with new methods under new conditions.

Therefore we think that in just a few months Mustafa Kemal's conversion from the word "fazahat" condemning the Armenian Genocide to the genocidal vocabulary of the Young Turks on the eve of the 1920 autumn attack on the Republic of Armenia was not an expression of ordinary hypocrisy, as the author claims, but a shift in the toolkit of permanent expansionism characteristic of Turkish state policy. In the political statements of the past and present state officials of Turkey it is pointless to seek political principles with their western understanding; the latter have served and serve as instruments appropriate to this particular milestone of expansionism. In this context, criticism does not stand up to the assessment of the Turkish National Covenant carried out by Soviet scholars at the time as an attempt to cross the broad borders of the Ottoman Empire to the narrow boundaries of national statehood. The nation-state model adopted by Mustafa Kemal was, in fact, an attempt to modernize traditional forms and methods of Turkish expansionism, at the first destination of which its kernel was formed, with the unification of Anatolia and Western Armenia, but at the same time they mined the next zones of expansion outlined around it towards Syria, Cyprus, Thrace, Iranian Atrpatakan (Iranian Azerbaijan), Eastern Armenia and Western and Southern Georgia.

In this context, the author was able to reveal the secret instruction of Foreign Minister Mukhtar Bey on November 8, 1920 to the Commander of the Turkish Army Kâzım Karabekir on the "elimination" of the Republic of Armenia, which was one of the tangible manifestations of this process. The gradual demolition of Armenia inwardly and putting into game the existing Turkic ethnic enclaves for the purpose of its occupation had already been successfully completed in Kars and Nakhijevan, but had failed in Zangibassar and Vedi. In the Soviet period too, Turkey adopted a similar policy towards Armenia, which continued until the Karabakh movement. It is no coincidence, therefore, that they were not as angry in Baku about the departure of Azerbaijanis from Armenia as they were in Ankara. This policy continues today, with Turkey's prompting to Azerbaijan concerning the latter's manifested pretensions towards Zangezur, "Gökçe" and even "Irevan".

Рубен Сафрастян. Мустафа Кемаль: борьба против Республики Армения в 1919-1921 гг., Институт востоковедения НАН РА. Ереван, «Тир», 2019. – 140 с.

Геворг С. Худинян

Хотя за прошедшие 100 лет советская, постсоветская и зарубежная армянская историография многократно обращалась к отдельным эпизодам жизни и деятельности основателя республиканской Турции Мустафы Кемалья, в том числе к истории его непримиримой борьбы против Республики Армения, но по ряду объективных и субъективных причин у нас так и не образовалось определенное научное воззрение об этом видном политическом и военном деятеле. Дело в том, что в советский период мы сталкивались с политическими запретами, вскормленными традициями дружбы Ленин-Ататюрк, а в постсоветские годы – с неудовлетворительной изученностью источников, а также с фактом отсутствия определенной концепции восприятия историко-политических процессов. Почти та же поверхностность и односторонность заметна и среди армянских исследователей в диаспоре.

После восстановления независимости Армении наша историография в вопросе оценки жизни и деятельности Мустафы Кемалья не должна руководствоваться характеристиками советских времен или пропагандистским стереотипом порицания, основывающегося лишь на моральных принципах. В процессе строительства собственной независимой государственности становится первостепенным научное исследование богатых государственно-политических традиций Турции, отложив в сторону мировоззренческие основы советского примиренчества и морального порицания. Сегодня мы должны знать, познать и понять большие и маленькие секреты успехов, достигнутых нашим противником за последние два века, чтобы завтра суметь найти инструменты противодействия им. А в основе всего этого лежит в первую очередь научная задача всестороннего исследования жизни и деятельности политического, военного и государственного деятеля Кемалья Ататюрка.

В этом отношении небольшая по объему, но охватывающая и поднимающая довольно емкие вопросы книга проф. Р. Сафрастяна «Мустафа Кемаль: борьба против Республики Армения в 1919-1921 гг.» фактически является первой попыткой. Автору удалось найти четкую преемственную связь между младотурками, ответственными за осуществление Геноцида армян, и руководителем новой Турции, вышедшем на политическую арену после Мудросского переми-

рия для сокрытия их преступления. Этим был выявлен один из важнейших принципов государственной политики Турции: в своем поведении отмежеваться от совершенных предыдущими режимами и уже раскрытых преступлений, но последовательно продолжать их новыми методами в новых условиях.

Поэтому мы думаем, что «неожиданный» переход Мустафы Кемалья от осуждающего Геноцид армян слова «fazatah» к геноцидному лексикону младотурок, осуществленный в преддверии осеннего наступления 1920 г. на Республику Армения, был не выражением обычного турецкого лицемерия, как утверждает автор, а сменой инструментария перманентного экспансионизма, присущего государственной политике Турции. Потому что в политических заявлениях государственных мужей Турции прошлого и настоящего бессмысленно искать политические принципы в их западном понимании: они служили и служат инструментами экспансионизма, соответствующими данному этапу. В этом контексте не выдерживает критики оценка Национального обета Турции, данная в свое время советскими исследователями, как попытки перехода от широких границ Османской империи к узким рамкам национальной государственности. Модель нации-государства, которой формально придерживался Мустафа Кемаль, на самом деле являлась попыткой модернизации традиционных форм и методов турецкого экспансионизма, на первом этапе которого формировалось его ядро совмещением Анатолии и Западной Армении, но одновременно минировались очерчивающиеся вокруг него следующие полосы расширения в сторону Сирии, Кипра, Фракии, Иранского Азербайджана, Восточной Армении, Западной и Южной Грузии.

В этом контексте автор сумел обнаружить и оценить тайную директиву министра иностранных дел новой Турции Мухтар-бея от 8 ноября 1920 г. о «ликвидации» Республики Армения, адресованную командующему турецкой армией Кязыму Карабекиру, что было одним из фактических проявлений данного процесса. Потому что разыгрывание тюркских этнических анклавов с целью постепенного разложения Армении изнутри, а потом ее захвата до этого увенчалось успехом в Карсской области и Нахиджеване, но потерпело крах в Зангибасаре и Веди. В советское время Турция вела в отношении Армении однотипную политику, что продолжилось вплоть до Карабахского движения. Неслучайно, что в Баку были не так разгневаны фактом ухода азербайджанцев из Армении, как в Анкаре. Сегодня такая политика продолжается в форме притязаний со стороны Азербайджана с подсказки Турции, касающихся Зангезура, «Гекчи» и даже «Иревана».